

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 52/5

4 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լևոն Չախոյանի 05.11.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 07.10.2015 թ-ի թիվ 6110299 ակտի դեմ:

Ա/Ձ Լևոն Չախոյանի գանգատում բերված փաստարկները.

16.09.2015 թ-ին Ա/Ձ Լևոն Չախոյանին են մոտեցել Վանաձորի ՏՀՏ աշխատակիցները և ներկայացրել են հսկիչ գնման հանձնարարագիր՝ ծանոթացման: Միաժամանակ նրանց կողմից հայտնվել է, որ իբրև Ա/Ձ Լևոն Չախոյանին պատկանող խանութ-կրպակից կատարվել է հսկիչ գնում, որի համար չի տրամադրվել ՀԴՄ կտրոն:

Ա/Ձ Լևոն Չախոյանը հայտնում է, որ գնում կատարած անձը Վանաձորի ՏՀՏ աշխատակիցների հետ չի ներկայացել, չի ներկայացվել նաև իբրև գնված ապրանքը, չի կատարվել գնված ապրանքի վերադարձ և չի ներկայացվել որևէ հիմնավոր փաստարկ տվյալ գնման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Լևոն Չախոյանը խնդրում է ուսումնասիրել սույն գանգատին առնչվող նյութերը և կայացնել օրինական որոշում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 11.09.2015 թ-ի թիվ 6110299 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Լևոն Չախոյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 07.10.2015 թ-ի թիվ 6110299 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Վանաձորի ՏՀՏ պետի տեղակալ Արա Պապիկյանի կողմից 16.09.2015 թ-ին ժամը 16:30-ին ք.Վանաձոր, Վարդանանց 122 հասցեում գտնվող Ա/Ձ Լևոն Չախոյանին պատկանող մանրածախ առևտրի կետից կանխիկ դրամով կատարվել է գնում 370 դրամի չափով՝ 1 հատ ծխախոտ: Ա/Ձ Լևոն Չախոյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 16:38-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 2240 դրամ ընդհանուր գումարով: Չմուտքագրված 370 դրամ գումարը ժամը 16:38-ին մուտքագրվել է ՀԴՄ և ժամը դուրս է բերվել կտրոն և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվություն:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 150.000 դրամ:

Գանգատում Ա/Ձ Լևոն Չախոյանի բերված պնդումների վերաբերյալ, որ 16.09.2015 թ-ին Վանաձորի ՏՀՏ աշխատակիցները իրեն են ներկայացրել հսկիչ գնման հանձնարարագիր՝ ծանոթացման, ինչպես նաև, որ իրեն պատկանող խանութ-կրպակից կատարվել է հսկիչ գնում, հարկ է նշել հետևյալը.

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի կողմից 11.09.2015 թ-ին հրապարակվել է թիվ 6110299 հանձնարարագիրը (այսուհետ՝ Հանձնարարագիր) Ա/Ձ Լևոն Չախոյանի մոտ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ: Այսինքն, Ա/Ձ Լևոն Չախոյանին է ներկայացվել ոչ թե հսկիչ գնում կատարելու, այլ՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ հանձնարարագիր:

Գանգատում նշված է նաև, որ գնորդը չի եկել և չի ներկայացրել գնված ապրանքը, ինչպես նաև չի կատարվել գնված ապրանքի հետ վերադարձ:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի տեղակալ Արա Պապիկյանը, որին համաձայն ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 16.09.2015 թ-ի թիվ 226 հրամանի իրավունք է վերապահվել մասնակցել ստուգման գործընթացին, ք.Վանաձոր, Վարդանանց 122 հասցեում գտնվող Ա/Ձ Լևոն Չախոյանին պատկանող մանրածախ առևտրի կետից 16.09.2015 թ-ին ժամը 16:30-ին գնել է 1 տուփ ծխախոտ, որի համար կանխիկ վճարել է 370 դրամ: Սակայն, վճարված գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել ՀԴՄ կտրոն: Այնուհետև մանրածախ առևտրի կետ են մուտք գործել հանձնարարագրում ընդգրկված մյուս պաշտոնատար անձինք, ներկայացրել են ստուգման հանձնարարագրի օրինակը և վկայականները, որից հետո Ակտի 1-ին կետում նկարագրված գործողությունների միջոցով ապացուցել են գնված 1 տուփ ծխախոտի գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, գնումը կատարվելուց հետո ժամը 16:38-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 2240 դրամ ընդհանուր գումարով, չմուտքագրված գումարը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ք.Վանաձոր, Վարդանանց 122 հասցեում գտնվող մանրածախ առևտրի կետի մակերեսը կազմում է մոտավորապես 70 ք.մ., որտեղ աշխատում է երկու վաճառողուհի: Տվյալ դեպքում կատարված գնումից հետո ՀԴՄ-ից դուրս բերված Z հաշվետվության տվյալներով ժամը 16:38-ի դրությամբ իրացումից հասույթը կազմել է ընդամենը 2240 դրամ, ինչը նման առևտրի կետի համար անհավանական է: Նշված հանգամանքը ևս անուղղակիորեն վկայում է այն մասին, որ Ա/Ձ Լևոն Չախոյանի կողմից գնումների ոչ բոլոր հասույթներն են մուտքագրվում ՀԴՄ:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պնդմանը, որ հետ չի վերադարձվել գնված 1 տուփ ծխախոտը, ապա հարկ է նշել, որ գնված ապրանքի հետ վերադարձնելու ընթացակարգը նախատեսված է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով նախատեսված հսկիչ գնումների իրականացման դեպքում: Սակայն քննարկվող դեպքում կատարվել է

ոչ թե հսկիչ գնում, որն ուսումնասիրության տեսակ է, այլ՝ ստուգման հանձնարարագրի պահանջների շրջանակում՝ գնում, որի ընթացքում գնված ապրանքների հետ վերադարձնելու պարտականություն որևէ օրենսդրական ակտով նախատեսված չէ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Լևոն Չախոյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որի համար Ակտով կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 07.10.2015 թ-ի թիվ 6110299 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ